ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ե/40/1968-24 առ «09» 09 2024թ.

«Գայանե Խաչատրյան» ԱՁ
Գ. Խաչատրյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-205/23-4-01/035 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ տիկին Խաչատրյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հանդերձանքի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-205/23» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Գայանե Խաչատրյան» ԱՁ-ի միջև 2024 թվականի հունվարի 23-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-205/23-4-01/035 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից 70 օրացուցային օրվա ընթացքում»: Սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով 9, 12, 13, և 18-րդ չափաբաժնի համար սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքները Ձեր կողմից մատակարարված չեն:

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:

- 2.1.1 կետ՝ Գնորդն իրավունք ունի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասամբ լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Գայանե Խաչատրյան» ԱՁ-ի միջև 2024 թվականի հունվարի 23-ին կնքված №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-205/23-01/035 պայմանագիրը 9, 12, 13, և 18-րդ չափաբաժնի մասով և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (83 800 ՀՀ դրամ) և որակավորման ապահովումները (125 700 ՀՀ դրամ):

Հարգանքով՝

ԳՏՏ-ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կազմեց՝
Հ. Ռամազյան
ԳԸԲ գլխավոր մասնագետ
Հեռ. 010-20-04-91